ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ
Վարդան Պետրոսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներքին գործերի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ

Աննիկ Գրիշայի Սավզյանի կողից 2024 թվականի 2-րդ եռամսյակում

կատարած աշխատանքների վերաբերյալ

։

2024թ. 2-րդ եռամսյակի ընթացքում իմ կողմից ք.Երևան Աբովյան 54 աշխատավայրում կատարվել են հետևյալ աշխատանքները:

1. Կազմել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության բժշկական վարչության 2024թ. 2-րդ եռամսյակի ծախսերի նախահաշիվների կատարման հաշվեկշռի հաշվետվությունը, նաև դեղորայքի և վիրակապական նյութերի , սոցիալական փաթեթի, կոմունալ ծախսերի, աշխատակիցների թվաքանակի և դրամական բավարարման, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի և պահեստարված միջոցների, հիմնական միջոցների, նյութական արժեքների շարժի վերաբերյալ հաշվետվությունները , ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:

2. Ընդունել եմ բժշկական վարչության աշխատողների ապրիլ, մայիս, հունիս ամիսների աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, կատարել աշխատավարձերի, պարգևատրումների, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխհատուցումների հաշվարկները, կազմել համապատասխան վճարման ցուցակներ:

3. Կատարված հաշվարկների հիման վրա կազմել եմ բյուջետային ֆինանսավորման հայտ-պահանջագրեր:

4. Ներկայացված հայտ պահանջագրերով բացված ֆինանսավորումների հիման վրա կատարել եմ փոխանցումները:Բժշկական վարչության հաշվից կատարել եմ աշխատավարձի, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխանցումների, սոցիալական վճարի, եկամտային հարկի, դեղորայքի և այլ վճարումները:

5. Վարել եմ աշխատակիցների աշխատավարձերի հաշվարկման անհատական քարտերը, անհրաժեշտության դեպքում տրամադրել միջին ամսական աշխատավարձի վերաբերյալ տեղեկանքներ, ծառայողական տեղափոխումների և ծառայությունից արձակվելու դեպքում կազմել դրամական վարձատրության վկայականներ, կատարել վերջնահաշվարկ:

6. Սահմանված ժամկետում կազմել և էլեկտրոնային եղանակով հարկային մարմին եմ ներկայացրել եկամտային հարկի և սոցիալական վճարի 2024թ. մարտ, ապրիլ, մայիս ամիսների ամփոփ հաշվարկները:

7. Կատարել եմ հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների գրանցման և հաշվառման աշխատանքները:

8. Կազմակերպել եմ բժշկական վարչության հիմնական միջոցների դուրսգրման աշխատանքները , հիմք ընդունելով ՀՀ ՆԳ Նախարարի 24.06.2024 թվականի թիվ 2820-Ա հրամանը:

9. Կատարել եմ ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության կողմից ստացված հանձնարարականները, շրջաբերականների պահանջները, հետևել ցուցումներին, պարզաբանումներին, նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններին:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Ա.Սավզյան

«2» հուլիս 2024թիվ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ Վարդան Պետրոսյան

« » հուլիս 2024թիվ